

Բ Ա Ն Ա Ս Է Ր

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Ք

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ	Տարեկան՝ 15 Քր. = 6 ռբլ.	ՅՈՒՆԻՍ
1905	= 3 դոլար:	ԹԻԻ 6

ԱՆԻՒ ՆՈՐԱԳՈՒԹԻՒՆԸ

Թերթերու մէջ կարգացինք թէ Անին նորոգելու ծրագիր մը կայ։ Այս ծրագիրը նոր չէ. այլ քանի՜ քանի անդամներ մտադրութիւն յայտնուած, ծրագիրներ պատրաստուած, գործի ձեռնարկուած, բայց առաջին քայլին իսկ դժուարութիւններու հանդիպելով իրականացած չէ այս պիտի վերին աստիճանի ազդեցութեամբ զաղտփար մը։

Անիի վերանորոգութիւնն համար պատրաստուած վերջին լուջ ծրագիրն եղած է 1879 թուականին, որ ժամանակ Գէորգ Դ կաթողիկոսի հրամանով ընկերութիւն մը կազմուած է Վեդաբարձական Ընկերութիւն Մայր-ենկեղեցւոյն Անուոյն անունով։ Ընկերութեան նախագահն եղած է Կարսի նոյն ժամանակուան առաջնորդ Գրիգորիս եպ. Աղաանեանց, Բայց քիչ ժամանակէն այս Ընկերութիւնն ալ դադարած է գոյութիւն ունենալէ։ Ընկերութեան աստեղագրութիւնները ձեռք բերելով յնորհիւ Տէր Մինաս առաջ քահանայ՝ Տէր Պետրոսեանի ու կը հրատարակենք նոյնութեամբ, զաղտփար մը տալու համար արդէն եղած ձեռնարկութիւններու վրայ։

Այստեղ թերեւս աւելորդ չըլլայ մէջ բերել Անին այցելողներէ մէկուն, Ս. Յովհաննիսեանի, հետեւեալ տողերը, զոր մեր ներկայութեանը գրած է իր յիշատակարանին մէջ, 1903 օգոստոս 3ին։

«Նոյն գրեմ որ Խաւսր զգացմունքներ զարթեցրին իմ մէջ Անիի աւերակները, համարեալ նոր քան մը ասած չիմ լինի, Բայց վերյուշումները գիւցաղական անցեալից եւ նրա համեմատութիւնը մեր աւելի քան ախուր ներկայի հետ, աւելի է զօրեղացնում Խաւսրութեան ըզգացմունքը։ Աւերակ է ո՛չ միայն մեր պապերի արիւնով ողողուած հայրենիքը, այլ եւ, ցաւ է ասել, աւերակ է եւ մեր ներկայ ժողովուրդը. մի ժողովուրդ որ դիտէ միայն անցեալով ապրիլ, ինձ թուում է թէ ներկայ քաղաքակիրթ պայմաններում մենք մեր ազգային պարտաւորութիւնները վերաբերեամք անհամեմատ անբարեխիղճ ենք։ Մենք ո՛չ միայն չկարողացա՞նք մեր պապերից խողած աւերակները վերանորոգել, այլ եւ չկարողացանք նոյնութեամբ յանձնել ապագայ սերընդին. մենք չհասկացանք մեր պատմական դերը եւ սեւով պատեցինք այն չրջանը որի ընթացքում մենք ապրում էինք. մենք մեր օրով ձեռքից աւելնք մեր ազգային ամենամաքաւ հիմնարկութիւնները...»

Կ. Յ. Ր.

Քիւ 68

Հող սբաւձական Ընկերութիւն

Մայր-եկեղեցւոյն Անւոյ .

Հաստատեալ 'ի 1879 ամի Յունիս 17 .

Հրա խանաւ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ-ի (լատ ժԱ-րդ*) հրահանգին՝ որ տուաւ մեզ 'ի բարաշուար Սինօղէն Ըրբոյ Էջմիածնի , յազազս կաղմելոյ Հողաբարձական Ընկերութիւն մի 'ի նորոգութիւն Մայր եկեղեցւոյն Անւոյ, եւ հաստատելոյ 'ի նմա ուխտ միարսնութեան . ահա կաղմեցաւ Հողաբարձութիւնն 'ի ներքոյգրեալ արժանաւատ տնձանց .

1 . Արժ . Տրն . Մինաս քչին Տէր-Պետրոսեանց

2 . Մեծ . Մ . Գէորգ աղա Բարսեանց

3 . » Հաճիպապ » Իսպիրեանց

4 . » Բարութիւն » Յովնանճանեանց

5 . » Մալխաս » Ուղունքիլիսեցի

6 . » Մ . Սահակ » Կարմիր-Վանքցի :

'ի վերոգրեալ Անդամոց զԱրժ . Տէր-Մինաս քահանայն հաստատեմք առ ժամանակեայ կերպիւ փոխանորդ 'ի տեղի մեր , զի 'ի դիպել հարկին նախագահեցէ ժողովոյն . իսկ

զԱրժ . Գէորգ աղա Բարսեանց Գանձապահ

» Յարութիւն աղա Յովնանճանեանց Ատենադպիր եւ

» Հաճիպապ » Իսպիրեանց Հաշուեկալ

'ի չինութիւն Մայր-եկեղեցւոյն Անւոյ , առ 'ի հաստատել 'ի նմա Վանական Միաբանութիւն , եւ յայտմ գործառնութեան խորհրդակցեացի միշտ ընկերութիւնն ընդ Առաջնորդին Կարուց :

'ի հաստատութիւն Հողաբարձական ժողովոյն ստորագրեալով կնքեմ

Առաջնորդ Կարուց

» Կ . Գրիգորիս Եպիսկոպոս

Աղուանեանց

*) Առաջնորդն (Կարուց) հետամուտ լիցի կարգել ընկերութիւն մի 'ի չինդ կամ 'ի վեց անդամոց յԱլէքսանդրապօլէ եւ 'ի չրջակայիցն Անւոյ . որ ընդ Վահագնոյն գործնեցեն ամենայն սջալըշութեամբ :

20-ին Յուլիոս 1879 ամի հեղեւեալ անձնադրութիւնները խորհուրդ կազմելով

Լուեցին

Որովհետեւ կառուց Գերապատիւ առաջնորդ Գրիգորիոս Եպիսկոպոս Աղուանեանը, առանց նախապէս մեր ցանկութիւնն իմանալու՝ ընտրել է իւր կողմից մեզ Անւոյ Հոգաբարձութեան պաշտօնի համար եւ իւր անուանական կնքովն ու ստորագրութեամբ մեզ ուղղած գրութեամբ հաստատել այդ պաշտօնում, նշանակելով իւր կողմից քարեկրօն Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանին խորանորդ՝ ի տեղի իւր, իբր նախագահող կազմելիք ժողովներին, Մեծ. Մահատեխ Դէորդ Բարայեանցին դանձապահ, Յարութիւն աղա Յովհաննէսեանցին առնապալիս, պաշտօնապաշտ Իսկիրեանցին հաշուեկալ, իսկ Ուղունքի իսեցի պաշտօնապահին եւ Կարմիր Վանքցի Մահատեխ Սահակին անպատակից՝ առաջին մանք իշխել անձնաւորութիւններս ի նկատի ունելով դործի վստմութիւնն ու ծանրութիւնը, իսկ մեր անկարողութիւնը, որոշեցինք չըճանաչել մեր պաշտօնական անձնաւորութիւններ, այլ միայն՝ հարկաւոր դէպքում իբրեւ բարոյական պարտականութիւն, ըստ կարելւոյն ձեռնադրել Նորին Սրբազանութեան իւր սկսած գործում։ Այդ բովանդակութեամբ մի թուղթ որոշուեցաւ գրել Սրբազան Աղուանեանցին։

Գերապատիւ Առաջնորդին կարուց Գրիգորիոս Եպիսկոպոս Աղուանեանց

Սրբազան հայր, Ձեր Գերապատիւութիւնը իւր գրութեամբ, որ գրուած է ամսոյս 17-ին 68 թուահամարու, նշանակելով եւ հաստատելով մեզ Անւոյ Հոգաբարձական ընկերութեան պաշտօնի մէջ, առանց նախապէս գէթ խորհրդակցելու, դրած է մեզ վրայ պարտականութիւն Անւոյ Մայր-եկեղեցւոյ նորոգութեան համար. բայց որովհետեւ այնքան ծանրակիչ չէ այդ պաշտօնը, եւ այնքան տկար մեր կարողութիւնը, որ մեր խիղճը թող չի տալիս անձնապահութեամբ կրել այդ պաշտօնական կոչումը մեզ վրայ, ուստի տեսնելով պարտականութիւն ենք համարում, օրանով խնդրել Ձեր հայրական ներողամտութիւնը ազատ ճանաչելու մեզ այդ պաշտօնական անուանակոչութիւնից։ Իսկ ինչ վերաբերում է Ձեզ այդ գործում օգնելուն, բարոյական պարտականութիւն կը համարենք հարկաւոր դէպքում, մեր աշխատութիւնն ու ջանքը ըստ կարելւոյն չըխնայել։

20-ին Յուլիոս 1879 ամի։

Ստացայ Յուլիսի 22ին

Թիւ 1.

Արժանապատիւ Տ. Մինաս քահանայ Փոխ-նախագահ Ան-
աշ Հոգաբարձական ժողովոյ, եւ Մեծապատիւ Անդամք:

Անհրաժեշտ հարկ ստիպեց զմեզ ձեռք զարնել՝ եկեղեցիներէն մէկը
անմիջապէս պատրաստել ժամասացութեան համար եւ երեք տենեակ
չինել այն-տեղ հաստատելիք միաբանութեան պատասխարելու:

Արդ՝ մենք Վեհափառ Կաթողիկոսէ եւ Ս. Էջմիածնայ Սինոդէ որ
արդէն տեսուչ եւ անահայր հաստատուած եմք Անուոյ եկեղեցի. վե-
րանորոգութեան, ուստի՝ մեր կողմանէ Փոխ-վանահայր կարգած եմք
Արթ. Ներսէս վ. Տիրիմանեան, Այս առթիւ զինք խրկեցինք Հոգաբարձա-
կան ժողովոյք քով նամակիս ծոցը ծրարեալ ցուցակին վրայ նշանա-
կուած պէտքեր հոգալու: Սոյն պէտքերու ծախք տեղէն գոյացունելու
համար, առանց աւարձայնութեան կը խնդրեմ անմիջապէս քաժանոր-
դագրութիւն բանալ, պիտոյքներ առնել եւ ուղարկել՝ եւ անա յիշեալ
Ներսէս վարդապետի հետ ուղարկեցի մի մատեան ժապաւնեալ, որուն
մէջ մուտքեր պիտի ստորագրուի:

Ախլցխացի պ. Յովակիմ Գեղամեանը տեղս գտնուելով, երկու
հարիւր ռուբլի փոխանակագիր ուղարկեց 'ի Կարս բժիշկ պ. Խազէդ-
եանցի վրայ մեզ հատուցանելու յիշեալ գումարը: Իսկոյն հետ եւ ես
կաշխատեմ Կարսայ մէջ 2-300 ռուբլի հանգանակել սոյն առժամանա-
կեայ փոքրիկ ծախքը գոցելու համար: Պ. Գիւրքեանց քանի օրէ 'ի
վեր ձեռնարկած է Անուոյ եկեղեցեաց ներքին եւ արտաքին կողմերու
լուսանկար պատկերն առնել, որն շատ գեղեցիկ յաջողուած է, սոյն
աշխատասիրութիւն անտարակոյս եւ որ օր, մը մեր Հոգաբարձական
ժողովոյ ձեռնարկութեան շատ օգտակար պիտի ըլլայ:

Մինչ ց'այժմ չը հասաւ մեր ձեռքը Հոգաբարձական ժողովոյ ան-
դամոց ցուցակը կը խնդրեմ անմիջապէս հարցունել մեզ 'ի Կարս:

Անդամոց ցուցակին մէջ աւելցունելու էք Կարսեցի Մեծ. Մ. Յա-
րութիւն պ. Մխմեանց եւ Ախալցխացի Մեծ. բժիշկ պ. Ալէքսանդր Խա-
զէդեանցը:

Սոյն ձեռնարկութեանց համար նամակներու պատճէն յատուկ առ-
մարի մէջ Թաւադարու տունելու էք:

Ներսէս վարդապետի եւ իւրեան սպասուորի մը համար քանի
ռուբլի ա՛մ որո՞ դա՞ 'ի նշի յիշութիւններ լինալու:

Պէտք եղած կանաններ կը խնայեմ որ խմբագրէք :

Անոյ Մայր-եկեղեցիի շտրոգութեան արտօնագիրը արդէն ձեռք բերած եմք :

Հարկ չկայ առ այժմ սոյն ձեռնարկութիւն շրջապատ միջոցաւ 'ի հրապարակ հանել :

Մնաւ անձնանուէր Առաջնորդ Կարուց եւ վանահայր վանօրէից Անուոյ :

20 Յուլիոս 1879 ամի
յԱնի :

Գրիգորիոս Եպիսկոպոս
Ազուանեանց

Պատճեն

(Կարուց առաջնորդին)

Գերապատի՛ւ հայր :

Որովհետեւ Յուլիոսի 20-ին Ղօշաւանքից դռութեամբ ուղարկել էիք մի ցուցակ զանազան պիտոյից եւ իրեղինաց , որպէսզի հանդանակ'ւով տեղումս դրամական նուէր պատրաստեմք նոյն հարկաւոր իրեղէնները եւ ուղարկենք Ձեր Գերապատութեանը գործի գիւրութեան եւ յաջողութեան համար • ուստի՝ ի նկատի ունենալով Ձեր աշխատութեան ու ահաւանջներին անհրաժեշտութիւնը, կատարեցինք Ձեր ցանկութեան համաձայն :

Ահաւասիկ ուղարկածք ցուցակին համաձայն , ուղարկում ենք չորս հատ փայտատ , չորս հատ բան , չորս հատ թի , չորս հատ մեջք , երեք հատ ձեռքի սայլ , մի հատ մեծ ջրի տակառ , մի հատ կապասայլ (կաշկայ), մի հատ թեկու ձիւ երկու հատ կաթօշ , մի հատ ձազառ եւ երկու հատ ջրի բաժակ : Այդ բոլորը գնուեցան հանգանակութեամբ եւ ամենի արժէքն է ութսուն ոսկի :

2-ին Օգոստոսի 1879 ամի :

Կատարեցաւ

Պատճեն

Ստացաւ Օգոստոսի 7-ին

Արժանապատիւ Տէր Մինաս քանեալ,
Տէր-Գեորգեան

Կը յուսամ որ ջարդ Յօնանեանեան Յարութիւն ազան վերադարձած

է 'ի քաղաքի՝ որուն հետ եւ դուք ձեռն 'ի դործ կ'լինիք դրամ պահ-
րաստել եւ զրկել մեզ ունեցած գրամմիս միայն 200) ք • է : Կարսէն հա-
ւաքել էի 300 բուրլի առ այժմ չպիտի յաջողի : զի հանգանակող Ազ-
նաւորեանն գնաց 'ի Կարին :

Առ Ձեզ զրկած պաշտօնական նամակաց պատճէները կը յուսամ որ
ցարդ ստացած կ'լինիք :

Անցեալ աւուր զրկածդ գործիքներ ստացան , չնորհակալ եմ :

Անւոյ Մայր-եկեղեցին վաղեան օրը մաքրելէն կը լմնամք. կաշկան
զրկեցինք Ձեր քով , որոյ վրայ դնելու զրկելու էք պօնկաներ , որպէս-
զի շինութեան հիմնարկութիւն ընեմք , այն հիմնարկութիւն , որուն
խկի պիտի չ'հաւատայ յուսահատ Անին իւր հինգ հարիւր տարուան
կրած տառապանքների փորձառութեամբ , իսկ հայեր թող հաւատան ,
որ Աստուած 'ի ձեռն տկարաց հզօրագոյնս կը գործէ :

Առաջնորդ Կարուց եւ

Վանահայր Վանօրէից Անւոյ՝

6 Օգոստոս՝ 1879

Գ. Նպ. Ազուանեանց

'ի Ղօշավանք :



ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԴ ՄԸ ՓՈԲՐ ԱՍԻՈՅ ՄԷՋ

ԳՐԶԸԼ-ՊԱՇՆԵՐԸ

Փոքր-Ասիոյ մէջ գոյութիւն ունի կրօնական կարեւոր ազանդ մը,
որուն անգամները՝ ցրուուած էր զբուռն մինչեւ Սյաըն՝ ոռակօրէն կը
կոչուին Գրզըլ-Պաշ եւ որ ինքզինքնին կանուանեն Ալէվի : Իրենց
արարողութիւնները եւ հաւատալիքները կը պահեն ամենամեծ գաղտ-
նիքով եւ խորհրդաւորութեամբ , որով անկտրելի եղած է մինչեւ հիմա
թափանցել անոնց : Ոմանք քիւրտ են , ուրիշներ՝ մեծամասնութեամբ՝
թուրք , եւ կը խօսին մի միայն թուրքերէն : Այս վերջինները Սիւննի
կոչուած թուրքերէն արտաքինապէս կը տարբերին մի միայն իրենց մօ-
րաքին ու մագերուն կտրելու ձեւովը . զլուխնին չեն անիւրի , եւ փո-
խանակ մօրութիւն կտրել տալու , յաճախ կը ձգեն զայն անիւ ազատօ-
րէն : Ասկէ զատ՝ ինքզինքնին կանուանեն Միւսիւլման-Սիւննի : Կը
ժխտեն Գրզըլ-պաշ կամ Ալէվի ըլլալին , իսկ երբ պարտաւորուին ըն-
դունիլ , կա զանազան թէ՛ իրենք նուազ հաւատարիմ աշակերտներ չեն

ՀԱՅԿԱՆԵՐԸ

ՀԱՅԿԱՆԵՐԸ